



## ՆԱՌԵԿ ՔՀՆ. ՄԱՏԱՐՅԱՆ

### ՔԱՐՈՉ

«Յանուար Հօր և Որդոյ և Հոգույն Սրբոյ,  
ամէն»:

Միթքայի հավատացյալներ, վաղը Հայաս-  
տակաց Առաքելական Ուղղափառ Սուրբ  
Եկեղեցին տոնելու է հիշատակը Ս. Վահան  
Գոյջնեցու:

Վահան Գոյջնեցին ծնվել է 700 թվա-  
կանին, Գոյջն գալառում: Նա որդին էր  
Խոսրով հախարարի: Խճակն զիտեք, այդ  
ժամանակ Հայատանը թատերաբեմ էր և  
կովաչներոր արևելքի և արևմուտքի հզոր  
պետությունների միջև: 630—640 թվական-  
ներին մի նոր պետություն թատերաբեմ ի-  
ջապ և, որոշ տարիներ նետ, այլ երկրնե-  
րի հետ, գրավեց և Հայատանը: Դա Ս-  
րբարական օրավոր հզորացող հայի փայտ-  
րյունն էր:

700 թվականին, եթք ծնվել էր փոքրիկ  
Վահանը, արաբական պետության գորս  
էր կանգնած Մրվան ամիրապետը: Այդ ա-  
միրապետը ոգեց նորից արշավել Հայաս-  
տանի վրա, և իր գրավարներից մեկին  
ուղարկեց Հայոց աշխարհ: Բայց ժամանա-  
կի կաթողիկոս Սահակ Զորափորեցու թա-  
խանածագին խնդրանքով և միշնորդությամբ  
հայ ժողովորդը փրկվեց վերահաս աղե-  
տից: Չորս տարի անց՝ 704 թվականին մե-  
նուակ Մրվան ամիրապետը, և նրան փոխա-  
րինեց որդին՝ Արդմելեքը՝ դաման ու շար  
մի մարդ: Սա որոշեց երեսանց սիրաշահել  
հայերին, բայց գաղտնի կերպով /հրամա-  
յեց ոչնչացնել բոլոր հայ հախարարներին:  
Սրբները հախարարներին կանչում են՝  
հայատակության երդում տալու պատրիարքով,  
և եկեղեցու փակելով բոլորին այրում են:

Այսպիսով, մոտ 600 իշխաններ ու նախա-  
րարներ համատակվում են, զոհ գնալով  
չարի խարկանքին:

Հայ ժողովորդը, չունենալով իր նախա-  
րարները և իշխանները, մնում է տասնց  
դեկավարների, ինչպես ոչխարի հոտը՝ ա-  
ռանց հովիի, սովոր գայլերով շրջապատ-  
ված: Թշնամու զինվորները շարդում են  
ժողովրդին և կողովոտում հրանց  
վածքը, իսկ երեխաններին և կանաց գերե-  
վարում են: Այդ գերինների մեջ էր և չորս  
տարեկան Վահանը: Նրան տանում են Դա-  
մակոս և հանձնում ամիրապետին: Ամի-  
րապետը զարմանում է Վահանի գեղեցկու-  
թյան ու ոչխորհրդայական վրա, և թլպատել տա-  
լով երեխային, անունը դնում են Վահապ:  
Վահապը ստվորում էր արաբական դպրո-  
ցում և խորանում հրանց կրոնի գիտելիք-  
ների մեջ: Սակայն Վահանը աղոտ կերպով  
միշում էր իրենց տունը, նորն ու մորը, գի-  
տեր, որ ինքը քրիստոնյա է և ազգությամբ՝  
հայ: Իսկ ինչ է քրիստոնեությունը կամ հրա-  
նամունքը՝ նա չգիտեր:

717 թվականին ամիրապետ է լինում Օ-  
մար երկրորդը: Այս ամիրապետը բարի էր  
հոգով և սիրում էր արդարությունը, և իր  
իշխանության տարիներին երկիրը խաղա-  
ղության մեջ էր գտնվում: Անա այդ բարի  
ամիրապետին դիմում են հայերը, որ իրենց  
թույլ տրվի վերադառնալ Հայատան: Օմա-  
րը համաձայնվում է: Սովորից օգտվելով,  
Վահանը և մոտենում է Օմարին և խմբում  
հրանց թույլ տալ իրեն մեկնելու Գոյջն գա-  
վառ և տիրելու իր հայրական կալվածք-  
ներին: Օմարը թույլ է տալիս մի պայմա-

նով. որ նա Հայաստանում իր գործերը կազմավորելոց հետո նորից վերադառնա Դամակու՝ իր մոտ: Եվ ահա, Վահանը վերադառնում է հայրենիք: Ժողովորդը, լեռով ճրա վերադարձը, ցածությամբ դիմավորում է ճրան և խնդրում, որ նա մենա իրենց հետ և ապրի իր հայրական օշախում: Վահանը սքանչանում է Գոյթը գավառի տեսարաններով, ճրա շինչ շրերով և մաքոր օդով: Նա սկսում է ուսումնամիրել իր հայրերի պաշտած կրոնն և որքան խորանում է քրիստոնեական կրոնի ուսումնիք մեջ, այնքան սվելի պալծառանում է իր միտքը, տեսնում ճշմարիք լուս, գգուր իր ապած տարիների կրորասը խավարի մեջ և վերջնականապես որոշում է հրաժարվել խամինց: Նա լացելով պահառում է Սատոն, որ ների իր մեղքերը, հակառակ որ նա անգիտակցաբար էր ընկել օտարություն: Եվ ինչպես մի ծարավ մարդ, եթե տեսնում է ջրի աղբյուրը, վազում է ջոր խմելու, այնպես էլ Վահանը հայշտակորչամբ կարում էր Սուրբ Գիրքը: Նա ամեն օր աղոթում էր Սատոն և իր օրերը պահեցողությամբ անցկացնում: Ժողովորդը որպատշաճ աղցունքներով է ընդունում Վահանի քրիստոնյան դառնալը՝ տեսնելով ճրա հոգու ամրությունն ու բարի վարքը: Նրանք որոշում են ամուսնացնել Վահանին: Վահանն ընդդիմանում է, նաև առասպեկտում հետևել Քրիստոսի և Նրա առաքյաների կանքի օրինակին: Բայց ժողովրդի խնդրանքին անապով, նա ամուսնանում է Սյունիք Բարեկեն իշխանի աղջկա հետ: Սակայն ամուսնությունը չի խանգարում, որ նա շարունակի սրբակյաց կյանք վարել: Սուսվել հաճախակի է դարձնում աղոթքները, պահեցողության օրերը: Այդ օրերին վախճանվում է Օմարը և Վահանը ազատվում է այն երդումից, որ տվել էր Օմարին, այսինքն են վերադառնավ Դամակու: Հակառակ իր խոնջի հաճգտության, նա անհանգստանում էր, որ այլազգի իշխանները կարող են իր քրիստոնյան դառնալու լուրը հասցնել նոր ամիրապետին: Եվ այդպես էլ լինում է: Եթե Վահանը լսում է, որ ամիրապետը գիտի իր քրիստոնյան լինելը, պատրաստվում է մեկնել Հոնաստան, սակայն կինը չի համաձայնվում ճրա հետ մեկնել օտարություն և վերադառնում է իր մոտ: Վահանն ապավինում է Սատոն, Նրա օգնությանն է դիմում և հոգով ամրապնդված, սկսում է շրջագայել

Հայաստանի վանքերն ու ճգնարանները: Որտեղ որ լինում է, սիրում և հարգում են նրա անձը, որ նվիրված էր Տիրոջը: Իր վրա եղած իշխանական հագուստները փոխում է մազից պատրաստված պարեգոստով և ոտարորիկ սկսում է ման գալ: Շիշտ է, ժողովորդը ճրան սիրում էր, բայց բոլորն էլ վախենում են ամիրապետի զայրույթից: Եվ շատերն սկսում են խոսափել Վահանի հետ հանդիպելուց: Վահանը, գիտակցելով, որ հասել է նահատակվելու և իր ժամը, հայացքն ողղում է դեպի հարավ՝ ամիրապետի մոտ: Նա մտածում էր և հայ ժողովորդի մասին, որովհետև եթե նա չգնար ամիրապետի մոտ, ապա կարող էր ճրա զայրույթը թափվել ժողովրդի գլխին: Ամիրապետի պատասխանները փորձում են համոզել ճրան թողնելու քրիստոնեությունը, սակայն Վահանը ամուր է մնում իր հավատքին: Այն ժամանակ ճրան ներկայացնում են ամիրապետին: Վերջինս, տեսնելով Վահանի խոճով վիճակը, սկսում է հորդորել, որ նա «դարձի» գա: Վահանը սպատափառում է: «Թույլ տվեք ինձ իմ հավատքին մնալ և ես ավելի լավ կծառացնեմ ձեզ»: Իսկ ամիրապետը պետում է իրենը: Այն ժամանակ Վահանը պատախանում է: «Ինչպես կարող եմ թողնել լուսը և գալ դեպի խավարը: Լուսը տեսնողը խավարը չի սիրի, եթե նա բարի է և հոգին՝ խաղաղ»: Այդ ժամանակ ամիրապետը զայրանում է Վահանի վրա և ճրան ողարկում կառավիճարան, որ և գիտակում է: Այսպիսով, 738 թվականին Վահան Գողթնեցին ազատվում է երկրային տառապալից կյանքից և սկսվում է ճրա երկնային հոգևոր երանակեան կյանքը:

Մեր Եկեղեցին և մեր Սուրբ Հայրերը սրբացրեցին ճրան: Ամեն տարի հիշվում է այդ տառապակիր և սրբակյաց երիտասարդի համատակության հիշատառ:

Սիրելի հավատացյալներ, Սուրբ Վահան Գողթնեցոյն հավատքի զրության մի նշույլ թող լինի և մեր սրտերում, և մենք էլ, ճրա նաևն, ուսորենք Սատվածային լուսի ճշմարիտ ճանապարհը: Եվ թող մեր ժողովորդի այս մեծանուն հահատակ Սուրբ բարեկառ լինի բոլորին համար և թողություն խնդրի մեր բազում մեղքերի համար:

Սատոն շնորհը և սերը թող լինի մեզ բոլորին, ամեն:

